Ներկայացվել է՝
«Արարատի տարածաշրջանային
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Ուսանողների համաժողովին
«21».«հունիսի».2022թ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԿԳՄՍՆ «ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի Ուսանողական խորհուրդը 2021-2022 ուսումնական տարում շարժվել է համաձայն իր կանոնադրության,աշխատանքային պլանի,նիստերի ժամանակացույցի: Կազմակերպվել է գիտական, մշակութային և ճանաչողական բնույթի միջոցառումներ, հանդիպումներ, քննարկումներ:Վարել է թափանցիկ և ուսանողությանը հասանելի գործունեություն:

Ուսումնական տարվա սկզբում Ուսանողական խորհուրդը իրականացրել է հանդիպում ուսանողության հետ՝ քոլեջի տարածքին ծանոթացնելու նպատակով: Կազմակերպվել է «Հիշատակի Ցերեկույթ»՝ նվիրված արցախյան պատերազմին մասնակցած բոլոր զինծառայողներին: Ցերեկույթին հրավիրված էին այն ուսանողները, ովքեր մասնակցել էին մարտերին:

Կազմակերպվել են տարբեր մրցույթներ՝ ուսանողների առաջարկով՝ սպորտային և գիտական:

Ուսանողական խորհուրդը ունեցել է հանդիպում Ներքին Որակի ապահովման կենտրոնի պատասխանատու Մարինե Գալուբյանի հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել են Ուսանողական խորհրդի և ՈՆԱԿ-ի կայանալիք ծրագրերն ու միջոցառումները, ձեռնարկվել են համագործակցական քայլեր: Կազմակերպվել է ուսանողների հանդիպում տնօրենի և կազմակերպչական գծով փոխտնօրենի հետ, որի ժամանակ ուսանողները ստացել են իրենց հուզող բոլոր հարցերի պատասխանները, ինչպես նաև հնչեցրել են առաջարկներ:

Ուսանողական խորհուրդը անդրադարձել է «Ծխախոտի դեմ պայքարի» օրվան և տեղեկացրել ուսանողներին ծխախոտի ազդեցության մասին:

Կազմակերպվել է կինոդիտում ուսանողության շրջանում՝ ուսանողների ազատ ժամանցը հետաքրիր դարձնելու նպատակով: Իրականացվել են բարեգործական ծրագրեր: Մեծ ուշադրություն է դարձրել «Ուսանողի ձայնը» արկղիկին պարբերաբար բացելով այն և քննարկելով հարցերն ու առաջարկները տնօրինական կազմի ներկայացուցիչների հետ: Ուսանողական խորհուրդը անդրադարձել է նաև բանակի տոնին.բեմադրվեց փոքրիկ միջոցառում բանակում զինծառայողների մասին:

Երկրորդ կիսամյակում շարունակվեցին սպորտային մրցույթները, մրցեցին իրար դեմ առաջին կիսամյակում հաղթող թիմերը:

Նշվեցին Տյառնընդառաջն ու Ս.Սարգսի տոնը. ուսանողները միջոցառումը ցուցադրեցին բակում: Քոլեջի գրադարանավար Մարգարիտա Գալստյանի օգնությամբ կազմակերպվեց Գրքի տոնի առթիվ փոքրիկ ավանդույթ դարձած խաղ, որին մասնակցեցին թե՛ ուսաողները, թե՛ դասախոսները: Խաղին, պատահականության սկզբունքով, գրքեր նվեր ստացան բոլորը: Նշվեց նաև կանանց նվիրված միամսյակը՝

հետաքրքիր և տրամադրություն հաղորդող երգերով, բարեմաղթանքներով ու նվերներով:

Տարածքի մաքրության համար Ուսանողական խորհուրդը կազմակերպեց շաբաթօրյակ, որով զբաղվեցին և՛ ուսանողները, և՛ Քոլեջի աշխատակիցները: Երկրորդ կիսամյակում ևս կայացավ հանդիպում տնօրենի հետ և ուսանողները ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները, առաջադրեցին նոր մտքեր, առաջարկներ:

Հայկական ավանդույթները պահպանելու համար Ուսանողական խորհուրդը կազմակերպեց Ս.Զատիկը քոլեջում, մեծ դահլիճում ՈՒԽ անդամները պատրաստեցին սեղաններ, որոնցից օգտվեցին ուսանողներն ու դասախոսները՝ Ս.Զատկին վերաբերող երգերի նվագակցությամբ: Ուսանողական խորհրդի մասնակցությամբ քոլեջը 2022թվականի «Կրթություն և կարիերա» էքսպոյում ներկայացրեց իր մասնագիտությունները և ուսանողների կատարած գործնական առաջադրանքները: Ուսանողական խորհուրդը օգնությամբ կազմակերպվեց բաց դռների օր, որին ներկա գտնվեցին տարբեր դպրոցներից աշակերտներ, ովքեր ցանկություն էին հայտնել ծանոթանալ քոլեջի մասնագիտություններին:

Ուսանողական խորհրդի աշխատանքների գնահատման և հետագայում դրանց կատարելագործման համար, սահմանված կարգով, ուսանողներին տրվեցին հարցաթերթիկներ: Հարցաթերթիկների մեջ նշվում էր ուսանողների գոհունակության, ուսանողական խորհրդի կազմակերպած միջոցառումների մասնակցության, թափանցիկ և արդյունավետ գործունեության մասին:

Հարցման արդյունքներն են.

1. **«Ուսանողական խորհրդի կազմավորումը եղել է թափանցիկ և արդար» հարցին պատասխանել է 116 ուսանող՝ նշելով**



2. «Ուսանողական խորհուրդը վարում է թափանցիկ և ուսանողությանը հասանելի գործունեություն» հարցին պատասխանել է 115 ուսանող՝ նշելով

3. «Ուսանողական խորհրդի կազմակերպած միջոցառումները արդյունավետ են և որակյալ» հարցին պատասխանել է 116 ուսանող՝ նշելով




4. «Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցում են շատ ուսանողներ՝ ուսանողական խորհրդի կազմից դուրս» հարցին պատասխանել է 116 ուսանող՝ նշելով



5. «Ուսանողական խորհրդի ծրագրերը, միտված ուսանողների խնդիրների վերհանմանը /«ուսանողության ձայնը» արկղիկը, ուսանողության հետ պարբերաբար հանդիպումները/ արդյունավետ են» հարցին պատասխանել է 116 ուսանող՝ նշելով




6. «Ուսանողական խորհուրդը հետևողական է և իր լիազորությունների սահմաններում աջակցում է քոլեջի ուսանողության կոլեկտիվ և անհատական դիմումներին, առաջարկներին» հարցին պատասխանել է 116 ուսանող՝ նշելով